

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶԿԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՐՔԻԿՅԱՆ ԼԱԼԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ
ՉԵՂՈՔ ՍԵՌԻ ԲԱՅԵՐԻ ԱՐԺՈՒՅԹԸ**

**Ժ.02.01 «ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ
ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՅՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2024

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի
ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

Գուրգեն Կիպրոնի Խաչատրյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

Յուրիկ Սրապիոնի Ավետիսյան
բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր

Հովիկ Սենեքերիմի Մելքոնյան
բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Առաջատար կազմակերպություն՝

**Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան**

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2024 թ. դեկտեմբերի 25-ին
ժամը 15:00-ին, ԲԿԳԿ-ի՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում
գործող Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում:


Հասցե՝ 0015 Երևան, Գրիգոր Լուսավորչի 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թ. նոյեմբերի 21-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ն. Մ. Սիմոնյան



ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Լեզվական հաղորդակցման կարևոր նախապայմանը խոսքը ճիշտ կառուցելն է: Եվ քանի որ խոսքը կառուցվում է շնորհիվ բառերի և նրանցով կազմված բառակապակցությունների, ուստի կարևոր է նաև բառերի կապակցական հնարավորությունների ուսումնասիրությունը, որով զբաղվում է քերականությունը:

Հայ քերականագիտության պատմությունը վկայում է, որ բառերի միջև շարահյուսական կապերի հարցն ուշադրություն է գրավել դեռևս միջին դարերում, մասնավորապես Վարդան Արևելցու, Ֆրանցիսկո Ռիվոլայի, Կոնստանտին Գալանոսի, Մխիթար Սեբաստացու և այլոց քերականություններում, սակայն դրանցում տեղ են գտել այդ հարցին առնչվող մասնակի դիտարկումներ¹: Հայ քերականագիտության մեջ նշված հարցին համակարգված մոտեցում է ցուցաբերվել 19-րդ դ. երկրորդ կեսից սկսած, երբ քննության նյութ են դարձել նախադասության անդամների միջև ձևավորվող շարահյուսական հարաբերությունները, կապակցական հնարավորությունները, այդ թվում նաև՝ կապակցման եղանակները, միջոցներն ու հարակից այլ հարցեր: Սույն աշխատանքի արդիականությունը պայմանավորված է ժամանակակից արևելահայերենի (այսուհետև՝ ժամանակակից հայերեն) չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորությունների՝ առ այսօր ոչ ամբողջական ուսումնասիրությամբ:

Չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորությունների քննությունը կատարում ենք դրանց քերականական և իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրմամբ: Առաջնորդվելով գերազանցապես Գ. Զահուկյանի՝ արժույթի մասին առաջ քաշած դրույթներով և հայ ու օտարազգի լեզվաբանների մոտեցումներով՝ ենթակաառության, ստորոգառության և կոչականառության դեպքում կարևորել ենք ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցման համաձայնության (ստորոգառության դեպքում՝ նաև կառավարման) եղանակը, խնդրառության և պարագաառության դեպքում՝ այդ բայերի կապակցման ոչ թե բոլոր, այլ միայն ուժեղ (հազվադեպ՝ համեմատաբար ուժեղ) և պարտադիր կառավարման եղանակը:

Ատենախոսության նպատակն ու խնդիրները: Հաշվի առնելով ժամանակակից հայերենում չեզոք սեռի բայերի արժույթի ամբողջական ուսումնասիրության բացակայությունը՝ մեր ուսումնասիրության հիմնական նպատակն է գիտականորեն արժևորել ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորությունները:

Նշված նպատակին հասնելու համար մեր առաջադիր խնդիրներն են՝

- ա) քննել չեզոք սեռի միայն դիմավոր բայաձևերին բնորոշ արժույթի արտահայտությունները՝ ենթակաառությունը, ստորոգառությունը և կոչականառությունը,
- բ) քննել չեզոք սեռի դիմավոր և անդեմ բայերին բնորոշ արժույթի արտահայտությունները՝ խնդրառությունը և պարագաառությունը,
- գ) ուսումնասիրել տարբեր դասանիշ գոյականների հետ չեզոք սեռի բայերի

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.): Գ. Զահուկյան, Գրաբարի քերականության պատմություն: Վ. Քոսյան, Ժամանակակից հայերենի բառակապակցությունները: Վ. Համբարձումյան, Լատինաբան հայերենի պատմություն:

կապակցական հնարավորությունները,

դ) դասակարգել խնդրառությամբ և պարագառությամբ միարժույթ և բազմարժույթ չեզոք սեռի բայերը,

ե) կատարել ատենախոսության բովանդակությունից բխող եզրակացություններ:

Հետազոտության գիտական նորույթը: Սույն աշխատանքը ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի արժույթը համակարգված ուսումնասիրելու առաջին փորձն է: Հիմք ընդունելով հայ լեզվաբանների ուսումնասիրությունները, նկատի ունենալով չեզոք սեռի բայերի կապակցական տարատեսակ հնարավորությունները և հայ լեզվաբանության մեջ այդ հարցի ոչ լիարժեք քննությունը՝ ներկայացրել ենք ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի արժույթի ամբողջական պատկերը:

Հետազոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Ուսումնասիրությունը կատարել ենք՝ օգտվելով ընդհանուր և մասնավոր մեթոդներից: Հիմնականում կիրառել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, երբեմն էլ՝ վիճակագրական մեթոդները:

Հետազոտության տեսական նշանակությունը: Ստացված արդյունքները կնպաստեն ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կապակցական հնարավորություններին առնչվող հարցերի պարզաբանմանը:

Հետազոտության գործնական նշանակությունը: Ստացված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել ուսուցման գործընթացում և հետաքրքրել ուսումնական ծեռնարկներ, ուղեցույցներ, դասագրքեր, ինչպես նաև արժույթի բառարան կազմողներին:

Ատենախոսության փաստական նյութը: Չեզոք սեռի բայերի արժույթը ուսումնասիրելիս նյութերի ընտրության սկզբնաղբյուր են ծառայել Ստ. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարանը»², ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանը»³, Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանը»⁴, Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարանը»⁵ և ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի «Հայոց լեզվի բարբառային բառարանը»⁶:

Առանձնացրել ենք ժամանակակից հայերենի՝ կազմությամբ պարզ և ածանցավոր չեզոք սեռի բայերի ցանկը: Ըստ մեր հաշվարկների՝ դրանց թիվը հասնում է շուրջ 5500-ի⁷, որոնցից մոտ 3500-ը *ե* խոնարհման բայեր են, իսկ ավելի քան 2000-ը՝ *ա* խոնարհման: Հատկանշական է նաև, որ վերջիններիս կազմում գերակշռում են *-ան-* սուկածանցավոր կազմությունները (շուրջ 1500 բայ):

Համապատասխան օրինակները քաղել ենք հայ նոր գրականության բնագրերից և

² Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, հ.1-4, Երևան, 1944-1945:

³ Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ.1-4, Երևան, 1969-1980:

⁴ Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976:

⁵ Ս. Էլոյան, Արդի հայերենի նորաբանությունների բառարան, Երևան, 2002:

⁶ Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա-Զ, Երևան, 2001-2010:

⁷ Սա մեր հաշվարկման արդյունքն է:

Արևելահայերենի ազգային կորպուսից (ԱՐԵՎԱԿ)⁸: Արժույթի քննությունը կատարել ենք՝ հաշվի առնելով բառարանային միավորների ուղիղ իմաստները, քանի որ փոխաբերական իմաստների քննության դեպքում կաղավաղվեր բայերի արժույթի իրական պատկերը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և ներդրումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումների մի մասը զեկուցվել են միջազգային գիտա-ժողովներում, մյուսները լույս են տեսել գիտական հանդեսներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության, լեզվական աղբյուրների և նրանց համառոտագրությունների ցանկերից: Ատենախոսության ծավալը 149 էջ է:

Ներածություն: Ներածության մեջ ներկայացրել ենք հարցի պատմությունը, անդրադարձել արժույթի վերաբերյալ հայ և օտարազգի լեզվաբանների արտահայտած կարծիքներին:

ԳԼՈՒԽ Ա. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵՂՈՔ ՍԵՈՒ ՄԻԱՅՆ ԴԻՄԱՎՈՐ ԲԱՅԱՁԵՎԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՐԺՈՒՅԹԸ

Ա.1. Չեզոք սեռի դիմավոր բայերի ենթակառուցությունը:

Միայն դիմավոր բային բնորոշ արժույթի արտահայտություններից է ենթակառուցությունը, որով առանձնանում է ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի մեծագույն մասը: Վերջիններս ենթակայի հետ կապակցվում են դեմքի ու թվի քերականական կարգերի համաձայնության եղանակով:

Չեզոք սեռի բայերը ենթակառուցության տեսանկյունից բաժանվում են երկու խմբի՝ ենթակառու բայեր և ենթակա չստացող բայեր:

Ենթակառու չեզոք սեռի բայերը անհամեմատ մեծաթիվ են: Դրանց հիմնական մասի ցույց տված գործողությունը հավասարապես կարող են կատարել և՛ եզակի, և՛ հոգնակի, բազմակի կամ հավաքական ենթականեր: Հմմտ.*նա մենակ չէր ընթրում* (ՍՁԵԺԾ - 616) և *որոնք սփռոցի չորս բլուր նստած լուռ ընթրում էին*.... (ԱԲԵ - 213) // *Ընտանիքը ընթրում է* (ՀրՄ*) և այլն:

Այս շարքի բայերից տարբերվում են սահմանափակ թվով՝

ա) միայն հոգնակի, հավաքական կամ բազմակի ենթականեր պահանջող չեզոք սեռի բայերը՝ *խոնվել, կանգնորել, նստորել, պառկորել, վիտրալ*: Հմմտ.*Նստորել են անկանոն կանայք* Աբղուլի (ԳՄ*) // *մի քանիսը* պատի տակ *նստորել էին* (ԱԲ*) // տախտակների վրա *նստորել էին տերտերն ու Արաբաջին* (ԱԲԵ2 - 125).

բ) միայն մեկ առարկայի կողմից կատարվող գործողություն ցույց տվող չեզոք սեռի բայերը, ինչպես՝ *մենախոսել, մենականալ, մենասահել, մեներգել*՝ Կարծես *մենախոսում է Հակոբը*.... (ՍՍ*):

Ա. Ենթակառու չեզոք սեռի բայերը կարող են կապակցվել տարբեր դասային խմբերի ենթակաների, համաձայն որի՝ ժամանակակից հայերենում առանձնանում են չեզոք սեռի բայերի հետևյալ դասային խմբերը.

⁸ http://www.eanc.net/EANC/search/?interface_language=am

1. Միայն անձանիշ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայեր, որոնք ցույց են տալիս անձ(եր)ի՝

1.1. ամենօրյա և/կամ հաճախակի կատարվող գործողություն՝ *բարևել, ընթրել, ժպտալ, նախաճաշել, սրճել* և այլն, որոնք հայերենի ակտիվ բառաշերտից են:

1.2. Մտածական կամ թեական գործողություն՝ *երկբայել, երկմտել, մտասուզվել, մտմտալ, մտորել, չարամտել* և այլն:

1.3. Նյութական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական, սոցիալական և այլ վիճակի փոփոխություն. ինչպես՝ *անզավականալ, թշվառանալ, հարստանալ, մուրացկանանալ, սնանկանալ* և այլն:

1.4. Մարզական ոլորտին վերաբերող գործողություն՝ *բռնքքամարտել, դահուկավարել, ըմբշամարտել, հեռացարկել, չմշկել* և այլն, որոնց կազմությանը գերազանցապես մասնակցում են մարզաձևեր և մարզական գործիքներ ու պարագաներ ցույց տվող գոյականներ՝ *դահուկ, ըմբիշ, չմուշկ, սուսեր* և այլն:

2. Միայն կենդանանիշ ենթականերին կապակցվող չեզոք բայերը ցույց են տալիս.

2.1. կենդանանիշ գոյականների կամ դրանց առանձին դասերի կենսաձևին բնորոշ գործողություն՝ *բնավորվել, բոժոժավորվել, երամանալ, թխսել, թևաբախել, թևածել, թևել, խրտնել, չվել, պարսավորվել, սափել, վարգել, փեպրակալել* և այլն:

2.2. Կենդանիների արձակած զանազան ձայներ, այդ թվում՝

2.2.1. չորքոտանիներին բնորոշ ձայներ, ինչպես՝ *բառաչել, զոալ, խրխնջալ, կաղկանձել, կենտրահաչել, կալանչել, հաչել, մայել, մլավել, ոռնալ, վնգստալ, վրնջալ,*

2.2.2. թռչուններին բնորոշ ձայներ՝ *դայլայլել, ծվլլալ, ծուրուրուրել, ճովողել,*

2.2.3. միջատներին բնորոշ ձայներ՝ *բզզալ, բռռալ, ծղծղալ* և այլն:

Կենդանիների արձակած զանազան ձայներ ցույց տվող մի շարք բայեր միաժամանակ տեղեկություն են տալիս տվյալ կենդանու սեռի (հմմտ. *ծուրուրուրել* և *կչկչալ*), տարիքի, չափի, տեսակի (հմմտ. *ծվլլալ* /չափերով փոքր թռչուն/ և *կոնչալ* /չափերով մեծ թռչուն/) մասին:

3. Միայն իրանիշ ենթակա պահանջող չեզոք սեռի բայերը կապակցվում են՝ ա) թանձրացական իրանիշ գոյականներով արտահայտված ենթականերին (*կարկաչել, համեղանալ, ոստակալել* և այլն), բ) վերացական իրանիշ գոյականներով արտահայտված ենթականերին (*անձրևորել, գոյականանալ, ոնգայնանալ* և այլն):

Ինչպես անձանանիշ և կենդանանիշ, այնպես էլ իրանիշ ենթականերին կապակցվող չեզոք սեռի բայերը իմաստի առումով միատարր չեն: Մի շարք բայեր (*ածականանալ, գոյականանալ, գրականանալ, հոգնակիանալ, մակբայանալ* և այլն) ցույց են տալիս լեզվական իրողությունների փոփոխություն և հիմնականում կապակցվում են լեզվաբանական եզրույթի արժեք ունեցող վերացական իրանիշ գոյականներով (*բառ, լեզու, խոսք, հնչույթ* և այլն) արտահայտված ենթականերին: Բայերի մեկ այլ խումբ (*ալկոհոլանալ, աղիանալ, անալիանալ, եռալ, թթվել, հոտել, շաքարակալել, պահածոյանալ, քաղցրանալ* և այլն) ցույց է տալիս ուտելիքի և ըմպելիքի համի, հոտի, վիճակի փոփոխություն և այլն:

4. Բազմադաս բայեր: Բազմադասությունը լինում է երկու տեսակի՝ անսահմանափակ և սահմանափակ: Անսահմանափակ բազմադասության դեպքում բայերը կարող են կապակցվել բոլոր դասային խմբերի ենթականերին՝ *աճել, ավելանալ, բարձրանալ, ընկնել,*

իջնել, կորչել, մեծանալ, մնալ, նվազել, շարժանալ և այլն: Սահմանափակ բազմադասության դեպքում բայերը կարող են կապակցվել ոչ բոլոր դասային խմբերի ենթականերին (միայն անձնանիշ ու կենդանանիշ, միայն կենդանանիշ ու իրանիշ և այլն):

Ի տարբերություն ենթակաառու բայերի՝ ժամանակակից հայերենում, պայմանավորված բառիմաստով, առանձին խումբ են կազմում չեզոք սեռի սակավաթիվ բայեր, որոնք արտահայտության պլանում ունեն դիմաթվային սահմանափակություն և չեն կարող ենթակա ստանալ, այսինքն՝ ենթակաառության տեսանկյունից արժույթագրուկ են՝ *Մթնեց: Լուսացավ: Անձրևում է: Ձյունել է* և այլն: Գ. Զահուկյանը այդ բայերն անվանում է *միադիմի, միադեմ* կամ *զրո արժույթի* եզրույթներով⁹: Նշվածներից բացի՝ ժամանակակից հայերենի՝ ենթակաառությամբ արժույթագրուկ համադրական բայերից են նաև *աշունանալ, իրիկնանալ, կայծակել, ծմեռնանալ, ցերեկանալ* և այլն:

Ա 2. Չեզոք սեռի բայերի ստորոգառությունը: Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը ստորոգառության հատկություն դրսևորում են բաղադրյալ ստորոգյալների հանգույցի դերում: «Ստորոգելի – չեզոք սեռի ստորոգառու բայ» կաղապարի շրջանակներում չեզոք սեռի բայերի ստորոգառությունն արտահայտվում է հետևյալ մասնակաղապարներով՝

1. *Գոյական + չեզոք սեռի ստորոգառու բայ* կապակցությամբ, որում հանգույցի դերով գերազանցապես կարող են հանդես գալ էական, վերացական և մի քանի այլ բայեր, իսկ գոյականով արտահայտված ստորոգելին կարող է հանդես գալ քերականական տարբեր ձևերով, այդ թվում՝

1.1. ուղղական հոլովով, ինչպես՝ Քթիս կպնող դառը ծուխը Աղաբեկ տացուիս *ծուխն է* (ԼԽՊ, 8): Որսկանն իր *որսն է դարձել* (ԺՄ*): Նա այլևս *քահանա չէ* (ՄԽ*): ... նրա միակ ծանոթներն *ուսուցիչներն են* (ԱՋԵԺ3, 234): Նրանք Ծմակուտի *զավակներ էին* (ՀՄԱ2, 175): մեծը *Մարիամն էր* (ԱՋԵԺ2, 41):

1.2. Սեռական հոլովով: Օրինակ՝ *Մածունը ոչխարի է....* (ՄԽ*):

1.3. Տրական հոլովով: Օրինակ՝ Պետին գլուխը քաշ իր *գործին էր* (ԱԲԵ, 61):

1.4. Բացառական հոլովով՝ Սաղավարտները *պողպատից էին* (ԱՋԵԺ7, 376):

1.5. Գործիական հոլովով՝ Նրանք *մեքենայով են*, դու *ծիով* (ՀՄԱ2, 97):

1.6. Ներգոյականով՝Հայաստանն այսօր անելանելի *դրությունում է* (ԱճՄ*):

Ի տարբերություն ուղղական հոլովով դրված գոյականների անսահմանափակ գործածության՝ ժամանակակից հայերենի ոչ բոլոր գոյականների սեռական, տրական, բացառական, գործիական և ներգոյական հոլովները կարող են կապակցվել ստորոգառու բայի:

2. *Դերանուն + չեզոք սեռի ստորոգառու բայ* կապակցությամբ, որում ստորոգելի գործառույթով կարող են հանդես գալ առարկա ցույց տվող դերանունները, ինչպես՝ Հրամանատարը *ես չեմ* (ԼԽՊ, 37): Լավագույն հավատն *այն է*, որ երբեք չի դառնում կրոն (ՊՄ*): Ես չգիտեմ, թե *ի՛նչ է սերը* (ՍՀ*): Երեխայի համար մաքուր օդն *ամեն ինչ է....* (ԱՋԵԺ2, 203): մեր պապացու Ավետիքն անգամ *ոչ ոք էր եղել* (ՀՄԱ2, 409):

⁹ Գ. Զահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 468:

3. Անդեմ բայ + չեզոք սեռի ստորոգառու բայ կապակցությամբ, որում ստորոգելիի դերով կարող են հանդես գալ՝

3.1. անորոշ դերբայի ուղղական հոլովը՝ Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է (ՊԱ*): Դա հողվածներ գրել չէ, Վարդան (ՀԽ, ԺԱ*):

3.2. Անորոշ դերբայի սեռական հոլովը՝ Էդ մարդու հացն ուրելու չէ (ՄԳ*):

3.3. Բացարձակ անորոշը, որ պահանջում են դադարել, ձգարել, խուսափել, հրաժարվել, պատրաստվել և այլ ստորոգառու բայեր՝ զուգահեռաբար առանձնանալով նաև անորոշ դերբայի տրական կամ բացառական հոլովով արտահայտված խնդրառական արժույթով: Օրինակ՝ Խրուշչովը հրաժարվում էր դատարանը լինել այդպիսի հարցերում (ԳՃԱ*): նա կձգարի խուլ անկյուններով քաղաք մտնել (ՎԱ*):

4. Կապական կառույց + չեզոք սեռի ստորոգառու բայ կապակցությամբ, որում ստորոգելիի գործառույթով հանդես եկող բաղադրիչն արտահայտվում է կապերով և կապվող բառերով: Օրինակ՝ Երգերը հիմնականում ծովի մասին են (ԱԲԲՁԱ, 174):

5. Փոխանուն + չեզոք սեռի ստորոգառու բայ կապակցությամբ, որում իբրև ստորոգելի հանդես եկող բաղադրիչը կարող է արտահայտվել փոխանուն ածականի, թվականի, դերանվան, անդեմ բայի և լեզվական այլ միավորներների ուղիղ ու թեք ձևերով, ինչպես՝ Մեկը՝ Ալյան, շատ լավիկն է (ՎՊ1, 51): Կինոդիտողները հինգն են (ՄԳ*): Երկուսն էլ եղել է, բայց պրոգրեսիան երկրորդինն է (ՀՏՀ*): Չափանիշը նույնը չէ, իսկ երևույթը՝ նույնը (ՄԳ*): ես մի ոտքով կնկանդ հոյսին մնացողը չեմ (ԼԽՊ, 8): Տո՛, էլի խոսքը հո դատողինը չի, ուտողինն է (ՌԱ*):

6. Գոյականների, առարկայանիշ դերանունների և փոխանվանաբար գործածված բառերի փոխանուն սեռականների ուղղականով¹⁰: Օրինակ՝ Մեղքը Թամանյանինը չէ, որ հայը չունի բարձր աշխարհիկ կյանք (ԱՋԵԺ2, 95):

Ա 3. Չեզոք սեռի բայերի կոչականառությունը: Կոչականառությամբ օժտված են չեզոք սեռի այն բայերի եզակի և հոգնակի թվերի 2-րդ դիմային ձևերը, որոնք կարողանում են կապակցվել միայն անձնանիշ կամ նաև անձնանիշ առարկաների:

Չեզոք սեռի բայերը կոչականառության տեսանկյունից բաժանվում են երկու խմբի՝ կոչականառու բայեր և կոչական չստացող բայեր, որոնցից կոչականառու են՝

1. այն բայերը, որոնք կարող են կապակցվել միայն անձնանիշ առարկայի, ինչպես՝ բարկանալ, բարևել, զբոսնել, ընթրել, ծիծաղել, հագնվել, հարստանալ, նախանձել, սիրահարվել, վիճել և այլն: Օրինակ՝ Արփիկ ջան, բարևիր բոլոր տանեցիներին (ԺԱ*):

2. Այն բայերը, որոնք, անձնանիշ առարկաներից բացի, կարող են կապակցվել նաև մեկ այլ դասի առարկաների: Այսպիսի բայերը բաժանվում են երկու ենթախմբի¹¹.

2.1. բայեր, որոնց ցույց տված գործողությունը, կենդանանիշ ու իրանիշ թանձրացական և/կամ վերացական գոյականներից բացի, կարելի է վերագրել նաև անձնանիշ

¹⁰ Հմմտ. Ա. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, էջ 170: Ա. Աբրահամյան, Ն. Պառնայան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Շարահյուսություն, էջ 163:

¹¹ Տե՛ս Գ. Խաչատրյան, Կոչականառությունը որպես բայի արժույթի արտահայտություն ժամանակակից հայերենում, էջ 15-16:

գոյականներին, ինչպես՝ *աղմկել, բազմանալ, ընկնել, թռչել, կորչել, հեռանալ, մնալ, մոտենալ, նվազել, պակասել, քսանալ* և այլն: Օրինակ՝ *Մի՛ աղմկեք, փղեք...* (ԳԱ*):

2.2. Բայեր, որոնց ցույց տված գործողությունը կարելի է վերագրել ոչ միայն կենդանանիշ, այլև անձնանիշ գոյականների, ինչպես՝ *արթնանալ, գեղեցկանալ, զայրանալ, խլանալ, ծերանալ, կանգնել, սողալ, քնել* և այլն: Օրինակ՝ *Քնի՛ր, քնի՛ր, կապո՛ւյտ աղջիկ, ջգարթնես ձեզին* (ԵԶԵ, 46):

Կոչականառու բայերի մեծագույն մասը կարող է ստանալ թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվով կոչական: Սակավաթիվ բայեր (*խոնվել, համաճել, հարբորել, նստորել, պառկորել, վիսրալ* և այլն) պահանջում են հոգնակի կամ բազմակի կոչականներ: Օրինակ՝ *Բարի մարդիկ, մի՛ խոնվեք...* (ԲՎ*): Առանձնանում են նաև միայն եզակի թվով արտահայտված կոչական ստացող մի քանի բայեր, ինչպես՝ *մենախոսել, մենականալ, մենանալ, մենասահել, միայնանալ, մեներգել* և այլն: Օրինակ՝ *.... պարո՛ն, ուղղակի մենախոսի՛ր* (ՕՎՀ*):

Եթե ուղիղ իմաստով գործածվող անձնանիշ ենթակաառու չեզոք սեռի բայերն անդիմասահմանափակ են, ապա կոչականառության դեպքում նկատելի է դիմասահմանափակություն. կոչական կարող են ստանալ ուղիղ իմաստով գործածվող չեզոք սեռի բայերի միայն 2-րդ դիմային ձևերը:

Կոչականառությունը բնորոշ չէ նաև ժամանակակից հայերենի՝ ուղիղ իմաստով գործածվող չեզոք սեռի այն բայերին, որոնք՝

- ա) կապակցվում են միայն կենդանանիշ առարկաների, ինչպես՝ *բզզալ, դայլայլել, կաղկանծել, հաչել, ճովողել, մլավել, ոռնալ, չվել, սարկել, վնասվալ, փրփնգալ* և այլն,
- բ) կապակցվում են միայն իրանիշ առարկաների, ինչպես՝ *բողբոջել, գոյականանալ, եռալ, թնդալ, ծաղկել, հոգնակիանալ, ղողանջել, ոստակալել, սաստկանալ* և այլն,
- գ) կապակցվում են իրանիշ և կենդանանիշ առարկաների, ինչպես՝ *ճախրել, սավառնել,*

դ) դիմասահմանափակ (միադիմի) են. ունեն միայն եզակի թվի 3-րդ դեմք:

ԳԼՈՒԽ Բ. ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ՉԵԶՈՔ ՍԵՌԻ ԴԻՄԱՎՈՐ ԵՎ ԱՆԴԵՄ ԲԱՅԱԶԵՎԵՐԻՆ ԲՆՈՐՈՇ ԱՐԺՈՒՅԹԸ

Ի տարբերություն բայերի միայն դիմավոր ձևերին բնորոշ ենթակաառության, ստորոգառության և կոչականառության՝ խնդրառությամբ և պարագաառությամբ բնութագրվում են չեզոք բայերի թե՛ դիմավոր և թե՛ անդեմ ձևերը:

Բ.1. Չեզոք սեռի բայերի խնդրառությունը: Ժամանակակից հայերենի խնդրառու չեզոք սեռի բայերի և խնդիրների կապակցումը կատարվում է կառավարման եղանակով, որը, ինչպես հայտնի է, ունի երկու արտահայտություն՝ անմիջական, ինչպես՝ *Կայսրը ձիով շրջում էր փողոցներում* (LS*) և միջնորդական կամ կապային, ինչպես՝ *.... աշխատում է սրա-նրա համար....* (ՀՄԵ2, 10):

Մեր ուսումնասիրության նյութ են ծառայել ժամանակակից հայերենի չեզոք բայերը և նրանց ուժեղ կառավարմամբ կապակցվող հոլովական և կապական լրացումները: Խնդրառու չեզոք սեռի բայերը լինում են՝ ա) միարժույթ կամ բ) երկարժույթ:

Բ.1.1. Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայեր: Միարժույթ չեզոք սեռի բայերի խնդրառության դեպքում առկա է «*չեզոք սեռի բայ – անտողակի խնդիր*» կադապարը, որն իրականանում է՝

1. անմիջական կառավարման եղանակով,
2. միջնորդական կառավարման եղանակով:

Բ.1.1.1. Անմիջական կառավարման եղանակով ձևավորված կապակցություններում խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը ժամանանակակից հայերենում պարտադիր կերպով ենթադրում և, ըստ անհրաժեշտության, պահանջում են¹² խնդիր լրացում, որ կարող է արտահայտվել գոյականով, դերանունով, անորոշ դերբայով կամ փոխանունով: Անմիջական կառավարմամբ կապակցված խնդիր լրացումն արտահայտվում է՝

1.1. տրական հոլովով, որ պահանջում են *դիպչել, եղբայրանալ, զանգահարել, թղթակցել, կպչել, հակասել, հանդիպել, հաջորդել, հանգել, հարմարվել, ձգվել, մոտենալ, սիրահարվել, ցավակցել, քծնել* և այլ բայեր: Օրինակ՝ Գետն արդեն *մոտենում էր մեզ* (<ԽԵՍ, 333): Սա *հակասում է իմ համոզմունքներին* (ՖԴ*): *երբ ձգվում էր սպայություն սրանալու* (ՍԱ*):

Ըստ իմաստի՝ առանձնանում են համեմատության, փոխադարձ գործողության և կապվածության¹³, ընդդիմության, հնազանդության, ապավինության, վերաբերության, շահի տրականներ:

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերի պահանջած տրականով խնդիրը մյուս հոլովներով արտահայտված խնդիրների համեմատությամբ ավելի հաճախադեպ է:

1.2. Բացառական հոլովով, որ պահանջում են *ակնածել, բաղկանալ, դադարել, խուսափել, հարբել, հեռանալ, ծանծրանալ, նահանջել, սարսափել, վախենալ, փախչել ուշանալ* և այլ բայեր, ինչպես՝Տիգրանը *ակնածեց նրանից* (ԴԴ*):

Բացառականով լրացումը նախադասության մեջ գերազանցապես կարող է դառնալ անջատման, վերաբերության, բաղդատության կամ ներգործող խնդիր: Օրինակ՝ Չորս տարի *բացակայել էր ընտանիքից* (ԱԲ*): - Իսկ ո՞վ է ուզում *խուսափել մահից* (ՍԱ*): *որոնցից եթե տեղեկանա՞ չի կարող չմատնել* (<ՄԱԶ, 502): *նրանք բարիք ստեղծող աշխատողներից շարանում են* (ԳԳ*): Իբր չգիտե *ումից է հղիացել* (ԶԲ*):

1.3. Գործիական հոլովով, որ պահանջում են *զբաղվել, հպարտանալ, պարծենալ* և այլ բայեր: Գործիականով լրացումները հիմնականում կատարում են միջոցի կամ սահմանափակման խնդրի պաշտոն, ինչպես՝ կարող եք *նրանով հպարտանալ* (ԳՀ*): Եղիազարը *մկրթով ու մարմնով շուտ հասունացավ* (ՎԼՀ*):

1.4. Ներգոյական հոլովով, որ պահանջում են *անկեղծանալ, դժվարանալ, թերանալ, ծուլանալ* և այլ բայեր: Ներգոյականով լրացումները կատարում են սահմանափակման խնդրի պաշտոն, ինչպես՝ *նրանք թերանում են պետական գործերում* (ԶԽՎԱ, 254):

¹² Դասակարգումների ընթացքում օգտվել ենք Գ. Զահուկյանի (Տե՛ս Գ. **Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 473-479) և Վ. Քոսյանի (Տե՛ս Վ. **Քոսյան**, ժամանակակից հայերենի բառակապակցությունները, էջ 200-442) կազմած ցանկերից:

¹³ Վ. Առաքելյանն անվանում է փոխադարձ գործողության և կապվածության անտողակի խնդիր: (Տե՛ս Վ. **Առաքելյան**, Հայերենի շարահյուսություն, հ. Ա, էջ 296):

Բ.1.1.2. **Միջնորդական կառավարման եղանակով** ձևավորված կապակցություններում խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով ենթադրում և անհրաժեշտության դեպքում պահանջում են խնդիր լրացում՝ արտահայտված կապով՝թնկթնկում էր և իր *ցանկության ու թախանձանքի մեջ համառում* (ՍԶԵԺ, 482):

Հոլովական թերյութներին զուգահեռ՝ ժամանակակից հայերենում գործողության և առարկայի, հանգամանքի կամ հատկանիշի փոխհարաբերությունը կարգավորվում է նաև կապերի միջոցով: Սակայն հոլովաձևերով ոչ միշտ է հնարավոր արտահայտել այս կամ այն քերականական հարաբերությունը. « հոլովների արտահայտած հարաբերությունները ավելի ընդհանուր են և վերացական, քան կապերի արտահայտած հարաբերությունները»¹⁴: Ավելին, մի շարք դեպքերում կապերը պարզապես անփոխարինելի են. կան քերականական իմաստներ, որոնք արտահայտվում են միայն կապերով, ինչպես՝ ժողովուրդը *ապստամբել է թագավորի դեմ* (ԴԴ*):վիճաբանում ենք *իրար հետ* (ԴԴ*):

Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի մի շարք բայեր (*ապստամբել, բարկանալ, ըմբոստանալ, խենթանալ, կովել, մեղանչել* և այլն) պահանջում են տարբեր՝ հոմանիշ կամ ոչ հոմանիշ կապերով ձևավորված խնդիր լրացումներ: Հմմտ. Խլել կյանքը մի մարդու, *որի հանդեպ* արդեն *մեղանչել ես* (ԳՄ*) // *Մեղանչել եմ նրա առաջ* (ՎՄ*) //....որոնք *իրականության դեմ* չէին կարող *մեղանչել* (ԲԽ*):

Բ.1.2. Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայեր: Ժամանակակից հայերենի չեզոք սեռի մի շարք բայեր, պայմանավորված բայիմաստով, ենթադրում և պահանջում են երկու անուղակի խնդիր, որոնք առանձնանում են կապակցական տարբեր հնարավորություններով: Մի դեպքում երկու անուղակի խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են անմիջական կառավարման եղանակով, մյուս դեպքում անուղակի խնդիրներից մեկը միևնույն բային կապակցվում է անմիջական կառավարման, իսկ մյուսը՝ միջնորդական կառավարման եղանակով: Երրորդ դեպքում երկու անուղակի խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով: Ելնելով վերոնշյալից՝ ներկայացնենք միևնույն բայ գերադաս անդամի հետ անմիջական և միջնորդական կառավարման եղանակներով կապակցելիության տարբեր դրսևորումներ, որոնք ուժեղ կամ համեմատաբար ուժեղ կառավարման արտահայտություններ են և ընդհանուր առմամբ ներկայացնում են «*չեզոք սեռի բայ – անուղակի խնդիր – անուղակի խնդիր*» կաղապարը:

Բ.1.2.1. «Չեզոք սեռի բայ – անմիջական կառավարմամբ անուղակի խնդիր – անմիջական կառավարմամբ անուղակի խնդիր»

1. Խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերի շարքում առավել տարածված է «*չեզոք սեռի բայ – փրական հոլովով անուղակի խնդիր–այլ հոլովով անուղակի խնդիր*» ենթամասնակաղապարը: Որպես առաջին բաղադրիչ՝ նկատի ունենք հանգման և դրան հարակից քերականական հարաբերություն արտահայտող տրականները: Նշված ենթամասնակաղապարը ձևավորվում է *աղորթել, աշակերտել, բարևել, դավաճանել, դիմադրել, դիմել, ծանոթանալ, հավատարմ, նախանձել, օժանդակել* և այլ բայերով: Նկատենք, որ բերված շարքում առկա են իմաստային տարբեր խմբերի բայեր, և ներկայացնենք

¹⁴ Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, էջ 386:

դրանցով ձևավորված ու հաճախակի հանդիպող ենթամասնակաղապարները, որոնցում երկրորդ անուղղակի խնդիրն արտահայտվում է.

1.1. բացառական հոլովով՝ Սկզբում *ամուսնուն՝* Շիրակին *բողոքեց* իրենց *որդուց* (ՎՊ*): Բացառականով խնդիրը սովորաբար արտահայտում է վերաբերության իմաստ:

1.2. Գործիական հոլովով՝ Լիան երկու *ծեռքով կառչել էր ամուսնուն* (ԶԴ*): Գործիականով խնդիրը սովորաբար արտահայտում է միջոցի կամ միասնության իմաստ:

1.3. Ներգոյական հոլովով՝ Ֆաշիստներն այսօր իրենց հանցագործ *գործողություններում աշակերտում են երիտթուրքերին* (ՄՄ*): Ներգոյականով խնդիրն արտահայտում է սահմանափակման իմաստ:

Բ.1.2.2. «Չեզոք սեռի բայ – անմիջական կառավարմամբ անուղղակի խնդիր – միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր», որը նշանակում է, թե այս դեպքում խնդիրներից մեկը պետք է արտահայտված լինի որևէ հոլովով, իսկ մյուսը՝ կապային կառույցով:

1.2.2.1. Նշված մասնակաղապարով ևս որպես առաջին բաղադրիչ առավել հաճախ գործածվում են հանգման և դրան հարակից քերականական հարաբերություն արտահայտող տրականներ, որոնց զուգորդվում է երկրորդ անուղղակի խնդիրը՝ ձևավորված *առումով, գծով, դեմ, խնդրում, կողմից, համար, հետ, մասին, մեջ, մոտ, որպես, տեղը, փոխարեն* և այլ կապերով ու կապական բառերով, ինչպես՝ *այս առումով... կարեկցել* կարելի է բնապահպանության *նախարարին* (ԱՄ*): *հայագիտության գծով աշակերտում է Քերովբե Պարկանյանին* (ԷԱ*): թե չէ գնացել *ես գայլի դեմ գանգաբվել* գայլի *եղբորը* (ՆԶ*): Նա *ինձ պարկերանում է* *իբրև* Չապակի ու Լազոյի, *ժառանգորդը* (ՄքԸ*): Բերված օրինակների քննությունից պարզվում է, որ՝

1. կապային կառույցներով գերազանցապես արտահայտվում են հանգման, սահմանափակման և վերաբերության խնդրային իմաստներ: Դա պատահական չէ, քանի որ հենց վերջինների դեպքում է գերազանցապես կատարվում ուժեղ կառավարում, որն էլ կարևոր է արժույթի տեսանկյունից:

2. Որոշ բայեր տրականին զուգահեռ կարող են պահանջել տարբեր կապային կառույցներով խնդիրներ, որոնք արտահայտում են միևնույն քերականական իմաստը: Այս դեպքում որպես կապակցման միջոց գործածվում են համանիշ կամ հոմանիշ կապեր ու կապական բառեր: Այսպես՝ *առումով, գծով, գործում, խնդրում, հարց(եր)ում, մեջ* կապերով ու կապական բառերով ձևավորվում է սահմանափակման խնդիր, *մասին, շուրջ, վերաբերյալ* կապերով ու կապական բառերով՝ վերաբերության խնդիր և այլն (հմմտ. վերը բերված համապատասխան օրինակները):

3. Որոշ բայեր տրական հոլովին զուգահեռ կարող են պահանջել տարբեր կապային կառույցներով խնդիրներ, որոնք արտահայտում են տարբեր քերականական իմաստներ: Այսպես՝ *համար, տեղը* կապով ու կապական բառով արտահայտվում են, համապատասխանաբար, շահի և փոխարինության, *հետ* կապով՝ հանգման և միասնության իմաստներ (հմմտ. վերը բերված համապատասխան օրինակները) և այլն:

1.2.2.2. *Բացառականով անուղղակի խնդիր - կապային կառույցով անուղղակի խնդիր* պահանջող բայերից են՝ *բողոքել, գանգաբվել, դժգոհել, ելնել, զրուցել, հիասթափվել, մնալ, փրկնջալ* և այլն, որոնց պահանջով բացառականով անուղղակի խնդիրներին

զուգորդվում են կապային կառույցներով անուղղակի խնդիրներ՝ արտահայտված *առումով, գծով, խնդրում* և այլ կապերով՝ *հիասթափվեց եկեղեցու խնդրում* նաև *Խոմյակովի ուսմունքից* (LS*) և այլն:

Նշված կապային կառույցները ունեն գործածության տարբեր հաճախականություն: Այսպես՝ *խնդրում* կապական բառով արտահայտված խնդիրները հաճախադեպ են, մինչդեռ *գծով* կապական բառով արտահայտվածները՝ հազվադեպ, քանի որ խոսքի մեջ քերականական տարբեր հարաբերություններ տարբեր չափով են կարևորվում:

1.2.2.3. *Գործիական հոլովով անուղղակի խնդիր - կապային կառույցով անուղղակի խնդիր* պահանջող բայերից են՝ *արդարանալ, բողոքել, դաշնակցել, զբաղվել, հոխորտալ, պայքարել* և այլն: Վերջիններիս պահանջած երկրորդ անուղղակի խնդիրները ձևավորվում են մի շարք կապերով, որոնցից են՝ *անունից, դեմ, համար, խնդրում*այդ *մարդկանց անունից զբաղվեն* համազգային կարևորություն ունեցող հարցերի *լուծմամբ* (ԱՄ*): *Կարծես երկուսով դաշնակցել էին մոր դեմ* (ԱՄ*): և *դրանով արդարանում էին ծեծի համար* (ՁԽ*):

1.2.2.4. *Ներգոյականով անուղղակի խնդիր - կապային կառույցով անուղղակի խնդիր* պահանջող բայերից են՝ *դաշնակցել, համագործակցել, հարմարվել, ձայնակցել, մրցակցել* և այլն: Նրանց պահանջած երկրորդ խնդիրները ձևավորվում են *հետք* կապով՝ *Թուրքիան ռազմական բնագավառում համագործակցում է Վրաստանի հետք* (ԱՄ*):

1.2.3. **«Չեզոք սեռի բայ - միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր - միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր»**

Այս դեպքում միջնորդական կառավարմամբ անուղղակի խնդիր բաղադրիչներն արտահայտվում են կապային կառույցներով: Նշված տեսանկյունից առավել ակտիվ են ժամանակակից հայերենի *բարեխոսել, բողոքել, գանգալվել, դաշնակցել, զրուցել, խոսակցել, ծառայել, հասունանալ, մրցել, չարախոսել, փրկնջալ* և չեզոք սեռի այլ բայեր:

Պայմանավորված բառիմաստով՝ այդ բայերի պահանջով միևնույն նախադասության մեջ զուգորդվում են հանգման ու վերաբերության, հանգման ու սահմանափակման, վերաբերության ու սահմանափակման, միասնության ու հանգման, միասնության ու սահմանափակման, շահի ու ընդդիմության և այլ քերականական իմաստներ արտահայտող անուղղակի խնդիրներ, որոնց ձևավորմանը մասնակցում են կապերի ու կապական բառերի մի շարք զույգեր, որոնցից են՝ *անունով - դեմ, առաջ - դեմ, առթիվ - մոտ, առջև - համար, դեմ - հանուն, համար - առ, հետք - առումով* և այլն: Օրինակ՝ *Էսպես է ասում ձեզ մինը էն բանտարկյալներից, որոնց անունով դուք Ռուսաստանի դեմ բողոքում եք...* (<ԹԵԶ, 186): *Հիմա թշնամիները սուլթանի առաջ չարախոսում են իր դեմ* (ՍԽ*): Ահարոնին արգելել էր այդ առթիվ որևէ մեկի մոտ փրկնջալ (ՍԽ*):

Բ.2. Չեզոք սեռի բայերի պարագաառությունը: Չեզոք սեռի մի շարք բայեր, պայմանավորված բայիմաստով, առանձնանում են պարտադիր պարագաառությամբ, որն իրականանում է ուժեղ կառավարման եղանակով¹⁵: ժամանակակից հայերենում

¹⁵ Տեղի պարագաառությամբ առանձնացող բայերից բացի՝ սահմանափակ թվով բայեր պարտադիր կերպով ենթադրում և հարկ եղած դեպքում պահանջում են այլ պարագաներ: Այսպես՝ *փնել* չեզոք սեռի բայը ենթադրում և պահանջում է չափի պարագա՝ *ժամանակի պարագայի նրբիմաստով*: Օրի-

վերջինիս արտահայտման միջոցներն են հոլովածները և նրանց հետ գործածվող կապերն ու կապական բառերը, որոնցով ձևավորվում են տարածական, ժամանակի, պատճառի կամ չափի պարագայական հարաբերություններ¹⁶: Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի քննությունը ցույց է տալիս, որ պարագաառական արժույթի հիմնական դրսևորումներն են «*չեզոք սեռի բայ – տեղի պարագա*» կաղապարով արտահայտված այն կապակցությունները, որոնք իրականանում են ուժեղ կառավարման եղանակի թե՛ անմիջական և թե՛ միջնորդական տեսակներով:

Ըստ տեղի պարագաառության՝ ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը երկու տեսակի են՝ պարագաառու բայեր և պարագաառությամբ արժույթագուրկ բայեր: Պարագաառու չեզոք սեռի բայերը, կախված ենթադրվող տեղի պարագա գործորդների քանակից, բաժանվում են երկու խմբի՝ պարագաառությամբ միարժույթ բայեր և պարագաառությամբ եռարժույթ բայեր:

Բ.2.1. Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայեր: Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերից են՝ *բազմել, են, ընկողմանել, լինել, լողանալ, ծառանալ, կամ, կանգնել, մնալ, նստել, չորել, պառկել, պպզել, քարանալ*: Օրինակ՝ մի մարդ *կանգնել է* կտրված ծառի *քնին* (ԳՄ*) և այլն:

Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը գերազանցապես ցույց են տալիս դադար: Միարժույթ պարագաառության դեպքում առկա է «*չեզոք սեռի բայ – բուն տեղի պարագա*» կաղապարը, որն իրականանում է երկու ճանապարհով:

2.1.1. Անմիջական կառավարմամբ միարժույթ պարագաառություն: Այս դեպքում բուն տեղի պարագան կարող է արտահայտվել տրական, հայցական կամ ներգոյական հոլովով՝ Ինքնամոռաց՝ վազ *են* տալիս Ու *նստրորում գեւրնին, քարին* (ՊՄ*): Բարխուդարը.... *կանգնեց*.... նշանակված *տեղը* (ՄՄ*): *Անտառում* ամպի ծվեններ *կային* (<ԱԲԻ, 222):

2.1.2. Միջնորդական կառավարմամբ միարժույթ պարագաառություն: Այս դեպքում բուն տեղի պարագան արտահայտվում է մի շարք կապերի կապակցությամբ, որոնցից են՝ *առաջ, առջև, տակ և այլն*՝ ներկայանակն ու վրձինները ձեռն առավ, *նստեց նկարակայի առաջ* (ՌԶ*): Քրիստոսը *նստած է* երկարավուն *սեղանի առջև* (ՊԶ*): նա *ժայռի տակ պառկեց* (ՎԽԱ*) և այլն:

Բ.2.2. Պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայեր: Ժամանակակից հայերենում պարագաառությամբ եռարժույթ են չեզոք սեռի՝ ընթացք ցույց տվող բայերը, ինչպես՝ *գալ, գնալ, ժամանել, իջնել, հեռանալ, վազել, վերադառնալ, քայլել* և այլն, որոնք, որպես կանոն, կարող են միաժամանակ ենթադրել և անհրաժեշտության դեպքում պահանջել երեք տեղի պարագա՝ արտահայտված «*չեզոք սեռի բայ – սկզբնակերպի տեղի*

նակ՝ երեկ Աժ արտահերթ նիստը *տևեց* ընդամենը *մեկ ժամ* (<ԺՄ*): Սակայն հաշվի առնելով պարտադիր կերպով այլ պարագա ենթադրող և պահանջող բայերի սահմանափակ թիվը, որոշ դեպքերում էլ՝ պարագաառության ոչ միարժեքությունը՝ մենք ուսումնասիրում ենք ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի միայն տեղի պարագաառական արժույթի արտահայտությունը:

¹⁶ Տե՛ս Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան, Հայոց լեզու, 2-րդ մաս, Շարահյուսություն, էջ 53-57, 61-67, 75-78, 83-92, 96-100:

պարագա – անցման տեղի պարագա և վերջնակետի տեղի պարագա» կաղապարով: Ժամանակակից հայերենում ավելի հաճախադեպ են այն նախադասությունները, որոնցում պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով պահանջում են ենթադրվող պարագաներից մեկը, ինչպես՝ Շրջեցին իրենց հայացքները և հեռացան ծովափից (ԳԲ*): Քաղաքի կողմից մի կառք եկավ (Ս*): Գուրգենը քայլում է փողոցով (ՎԲ*): Քյուչուկը Նուրիին տարավ բաղնիք, ածիլել տվեց, լողացան ու վերադարձան փուն (ԳԲ*): Հազրոն մինչև թեքվեց, ավտոն արդեն սլանում էր դեպի գյուղ (ՄԳ*): Եռարժույթ պարագաառությունն արտահայտվում է անմիջական կամ միջնորդական կառավարման եղանակով:

2.2.1. Անմիջական կառավարմամբ եռարժույթ պարագաառություն:

Անմիջական կառավարման եղանակով պահանջվող սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաները կարող են չհիշատակվել՝ պայմանավորված տարբեր հանգամանքներով (չիմանալը, չկարևորելը, համատեքստում ենթադրվելը և այլն): Այդ է պատճառը, որ նայած խոսքային իրադրությանը կամ հեղինակի հայեցողությանը՝ անմիջական կառավարմամբ եռարժույթ պարագաառությամբ բնութագրվող չեզոք սեռի բայերը պարտադիր կերպով ենթադրում և պահանջում են՝

ա) կա՛մ սկզբնակետի տեղի պարագա՝ արտահայտված բացառականով, օրինակ՝ Եվ Շավոն հեռանում է գործարանից (ՍԱ*).

բ) կա՛մ անցման տեղի պարագա՝ արտահայտված գործիականով, օրինակ՝ Սպիտակ հագած մի մարդ փախչում էր հարթավայրով (ԱԲԴ*).

գ) կա՛մ վերջնակետի տեղի պարագա՝ արտահայտված տրականով կամ հայցականով՝ նախիրն աննկատելի մոտենում էր գեպրակին (ԱԶԵԺ1, 405): Բարձրացավ ու քայլեց փուն (ՄՍ*):

2.2.2. Միջնորդական կառավարմամբ եռարժույթ պարագաառություն: Ընթացք ցույց տվող չեզոք սեռի վերոնշյալ բայերը կարող են պահանջել նաև պարտադիր կերպով ենթադրվող, սակայն արդեն միջնորդական կառավարման եղանակով կապակցված սկզբնակետի, անցման և վերջնակետի տեղի պարագաներ, որոնցից սկզբնակետի տեղի պարագան արտահայտվում է *դիմացից, երևից* և այլ կապերի մասնակցությամբ, ինչպես՝ Մյուս մայթից, ուղիղ մեր դիմացից գալիս է եղբայրս՝ Բաբկենը (ԱԲ*): Ժայռի ետևից կարող է սուրալ թշնամու գնդակը (ՄՍ*) և այլն: Անցման տեղի պարագան արտահայտվում է *մոտից, վրայից* և այլ կապերի մասնակցությամբ, ինչպես՝ Մի կին անցավ դռան մոտից (ՎՖ*): Ծերունի գիտնականը *ցարկեց* փոքրիկ *առվակի վրայից* (ԱԶԾ*) և այլն: Վերջնակետի տեղի պարագան արտահայտվում է *դեպի, կողմը* և այլ կապերի մասնակցությամբ, ինչպես՝ Եվ վազեց դեպի պարտեզի դռնակը (ՆՕ*): Մարիֆն ու իր երկու օգնականը Դիպակի կողմը գնացին (ՀԲ*) և այլն:

ԵՐՐԱՎԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի արժույթի քննությունից հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. բառերի, մասնավորապես բայերի կապակցելիության ուսումնասիրությունն անհրաժեշտ է խոսքը ճիշտ կառուցելու, բառը տեղին կիրառելու, տվյալ լեզուն ուսուցանելու, տվյալ ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները բացահայ-

տելու և այլ տեսանկյուններից: Բայի արժույթի ուսումնասիրության առարկա են դառնում համաձայնության եղանակով կապակցվող ենթական և կոչականը, համաձայնության ու կառավարման եղանակներով կապակցվող ստորոգելին և ուժեղ կառավարման եղանակով կապակցվող խնդիրն ու պարագան:

2. Ենթակաառության, ստորոգառության, կոչականառության տեսանկյունից ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերը միարժույթ են, իսկ խնդրառության և պարագաառության տեսանկյունից՝ միարժույթ և բազմարժույթ:

3. Ժամանակակից հայերենում ենթակաառությունը, ստորոգառությունը, կոչականառությունը հատուկ են չեզոք սեռի միայն դիմավոր բայերին, իսկ խնդրառությունը և պարագաառությունը՝ հիշյալ բայերի և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերին:

4. Ենթակաառու չեզոք սեռի բայերը, պայմանավորված իրենց բառիմաստով, կապակցվելու հնարավորություն ունեն տարբեր դասերի (անձնանիշ, կենդանանիշ, իրանիշ) ենթակաների: Քանակական առումով անձնանիշ ենթակա պահանջող չեզոք սեռի բայերը զգալիորեն գերազանցում են մյուս դասերը ներկայացնող ենթակաառու բայերին: Առանձնանում են սակավաթիվ չեզոք սեռի միադիմի բայեր, որոնք ենթակաառությամբ արժույթագուրկ են:

Միայն անձնանիշ ենթակա պահանջող չեզոք սեռի բայերը կարող են հանդես գալ բոլոր դիմաթվային ձևերով, միայն կենդանանիշ և միայն իրանիշ ենթակա պահանջող բայերը արտահայտվում են եզակի կամ հոգնակի 3-րդ դեմքով: Տարբեր դասային խմբերի հետ կապակցվելու հնարավորություն ունեցող բայերը այս հարցում հանդես են բերում բազմազանություն:

5. Ժամանակակից հայերենի չեզոք սեռի ենթակաառու և կոչականառու դիմավոր բայերի թիվը անհամեմատ մեծ է, իսկ ստորոգառու բայերի քանակը երկու տասնյակից չի անցնում:

6. Ենթակաառու և կոչականառու չեզոք սեռի դիմավոր բայերը կարող են ստանալ միայն ուղղական հոլովով արտահայտված գործորդ (համապատասխանաբար, ենթակա և կոչական), մինչդեռ ստորոգառու չեզոք սեռի դիմավոր բայերն ունեն կապակցելիության լայն հնարավորություն. կարող են պահանջել ոչ միայն հոլովվող խոսքի մասերի տարբեր թեք ձևերով, այլև վերջիններիս ու կապերի կապակցություններով ձևավորված ստորոգելներ:

7. Կոչականառությունը դրսևորվում է միայն ուղղակիորեն մեջբերվող խոսքում: Կոչականառու բայերը, որոնք, որպես կանոն, անդիմասահմանափակ են, այս դեպքում հանդես են բերում դիմային սահմանափակություն. կապակցվում են միայն եզակի և հոգնակի 2-րդ դիմային ձևերով:

8. Խնդրառությունը բնորոշ է ժամանակակից հայերենի չեզոք սեռի ոչ բոլոր բայերին: Խնդրառու չեզոք սեռի բայերը լինում են միարժույթ և երկարժույթ: Խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը խնդիր ստորադաս անդամին կապակցվում են անմիջական և միջնորդական կառավարմամբ: Առաջին դեպքում չեզոք սեռի բայերը պահանջում կամ ենթադրում են տրական, բացառական, գործիական կամ ներգոյական հոլովով արտահայտված անուղղակի (բնության) խնդիր լրացում, որոնցից բային կապակցվելու հաճախադեպությամբ առանձնանում է տրական հոլովով հանգման

խնդիրը: Երկրորդ դեպքում բայի և լրացման կապն իրականացվում է կապերի միջոցով: Արժույթի տեսանկյունից կարևորություն են ներկայացնում հանգման, վերաբերության և սահմանափակման կապերով ձևավորված խնդիրները: Բազմաթիվ դեպքերում նույն քերականական հարաբերությունը կարող է ձևավորվել և՛ հոլովական թեքությով, և՛ կապերով: Սակայն կան դեպքեր, երբ քերականական առանձին իմաստներ արտահայտվում են կա՛մ միայն հոլովաձևով, կա՛մ միայն կապային կառուցվով:

9. Չեզոք սեռի՝ խնդրառությամբ երկարժույթ բայերը ենթադրում և պահանջում են երկու բնության (անուղղակի) խնդիր: Վերջիններիս հետ կապակցումն իրականանում է երեք տարբերակով.

9.1. առաջին դեպքում երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են անմիջական կառավարման եղանակով:

9.2. Երկրորդ դեպքում հոլովաձևով արտահայտված բնության խնդիրը միևնույն բային կապակցվում է անմիջական, իսկ մյուսը՝ միջնորդական կառավարման եղանակով, քանի որ արտահայտված է կապային կառուցվով:

9.3. Երրորդ դեպքում երկու բնության խնդիրն էլ միևնույն բային կապակցվում են միջնորդական կառավարման եղանակով:

Երկարժույթ խնդրառությունը հաճախադեպությամբ զիջում է միարժույթ խնդրառությանը:

10. Չեզոք սեռի բայերի զգալի մասն աչքի է ընկնում թույլ կառավարման եղանակով խնդրառությամբ, իսկ մի մասն էլ զուրկ է խնդրառական արժույթից:

11. Պայմանավորված բայիմաստով՝ ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի մի մասն առանձնանում է պարտադիր պարագաառությամբ: Խոսքը մասնավորապես վերաբերում է տեղի պարագա ստացող բայերին, որոնք, կախված գործորդների քանակից, բաժանվում են երկու խմբի՝ ա) պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայեր և բ) պարագաառությամբ եռարժույթ չեզոք սեռի բայեր:

12. Պարագաառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը գերազանցապես ցույց են տալիս դադար և պարտադիր կերպով ենթադրում ու պահանջում են անմիջական կամ միջնորդական կառավարման եղանակով կապակցված բուն տեղի պարագա: Պարագաառությամբ եռարժույթ բայերի դեպքում հաճախադեպ են այն կառույցները, որոնցում բառային արտահայտություն ունեն միայն սկզբնակետի կամ միայն վերջնակետի տեղի պարագան: Համեմատաբար պակաս են հանդիպում միայն անցման տեղի պարագայով կառույցներ: Ասվածի համեմատությամբ առավել սակավ են այն նախադասությունները, որոնցում չեզոք սեռի՝ պարագաառությամբ եռարժույթ բայը կարողանա պահանջել ենթադրվող երեք պարագա գործորդներից երկուսը: Այս դեպքում էլ համեմատաբար հաճախադեպ են այն կառույցները, որոնցում բառային արտահայտություն ունեն սկզբնակետի և վերջնակետի տեղի պարագաները: Միաժամանակ երկու տեղի պարագայով արտահայտված նախադասություններում բայի կապակցումը տվյալ պարագաներին կատարվում է տարբեր կերպ. սկզբնակետի տեղի պարագան առավելապես հանդիպում է անմիջական կառավարմամբ, իսկ անցման և վերջնակետի տեղի պարագաները՝ և՛ անմիջական, և՛ միջնորդական:

13. Տեղի պարագաառությամբ առանձնացող բայերից բացի՝ սակավաթիվ բայեր պարտադիր կերպով ենթադրում և հարկ եղած դեպքում պահանջում են նաև այլ պարագա(ներ): Սակայն այսպիսի ոչ բոլոր կիրառությունները կարելի է արժույթի արտահայտություն դիտել, քանի որ հիշյալ կարգի պարագաները որոշ խոսքային իրադրություններում բառային արտահայտություն չունեն, հստակորեն չեն ենթադրվում, և հնարավոր չէ դրանք վերականգնել:

14. Ժամանակակից հայերենի բայի կապակցական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարող է որոշ չափով բացահայտել նաև մեր ժողովրդի լեզվամտածողության առանձնահատկությունները:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ենթակառուցությունը, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ, № 1(25), 2022, էջ 143-152:

2. Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի ստորոգառությունը, Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի գիտական տեղեկագիր (Հումանիտար և հասարակական գիտություններ), № 1, 2022, էջ 17-31:

3. Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ միարժույթ չեզոք սեռի բայերը, «Գիտական Արցախ», № 3 (14), 2022, էջ 146-156:

4. Խաչատրյան Գ., Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի կոչականառությունը, «Բանբեր Երևանի համալսարանի» (Հայագիտություն), № 1, 2023, էջ 101-110.

5. Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի՝ խնդրառությամբ երկարժույթ չեզոք սեռի բայերը, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, «Պատմաբանասիրական հանդես», № 2, 2023, էջ 203-212:

6. Գրքիկյան Լ., Ժամանակակից հայերենի չեզոք սեռի բայերի պարագաառությունը, «Հայագիտական հանդես», № 2 (65), 2024, էջ 110-121:

LALA HOVHANNES GRKIKYAN

THE VALENCY OF INTRANSITIVE VERBS OF MODERN EASTERN ARMENIAN

Thesis for PhD degree in Philology, specialty 10.02.01 “Armenian language”.

The defense will be held on December 25, 2024 at 15⁰⁰, at the session of Specialized Council on Linguistics of 019 HESC RA in the Institute of Language after Hr. Acharian NAS RE (address: 0015, Yerevan, Grigor Lusavorich St: 15).

SUMMARY

Relevance of the topic. In modern Armenian, the verb stands out from other parts of speech due to its combinability potential and the variety of its valency models and submodels. The relevance of this dissertation is determined by the fact that the combinability of intransitive verbs in modern Armenian has not been sufficiently studied.

Purpose and objectives of the dissertation. The primary purpose of this research is to scientifically evaluate the combinability of intransitive verbs in the modern Armenian language.

To achieve the stated purpose, we have set the following primary objectives:

- a) to analyze expressions of subjective, predicative, and vocative valency, which are characteristic only of finite forms of intransitive verbs,
- b) to analyze expressions of objective and adverbial valency characteristic of both finite and non finite forms of intransitive verbs,
- c) to study combining possibilities of intransitive verbs with nouns of various classes,
- d) to classify monovalent and polyvalent intransitive verbs in terms of their objective and adverbial valency,
- e) draw conclusions based on the content of the dissertation.

Scientific novelty of the research. In modern Armenian, intransitive verbs have not yet been subjected to separate study. This dissertation represents the first attempt at a comprehensive analysis of these verbs, primarily based on H. Jakhukyan's principles of valency. To provide a more complete description of the combining possibilities of intransitive verbs in modern Armenian, this research takes into account not only their grammatical but also their semantic features.

Theoretical significance of the research. The results obtained may be of interest to specialists in the field of syntax, particularly linguists studying issues of valency, as well as to students in faculties of Philology, contributing to the clarification of various questions regarding the valency of intransitive verbs.

Practical significance of the research. The theoretical and practical results obtained can be utilized in the educational process, particularly in the development of textbooks, manuals, educational, and methodological materials. They will also be of interest to compilers of verb valency dictionaries.

Structure and content of the dissertation. The dissertation consists of an introduction, two chapters with corresponding subchapters, a conclusion, a bibliography of references used, language sources and their annotations. The dissertation consists of 146 pages.

The introduction presents the background of the issue and includes opinions on valency expressed by Armenian and foreign linguists.

Chapter I: Valency characteristic only of finite forms of intransitive verbs in modern Eastern Armenian.

I.1. Subjective valency of intransitive verbs in modern Armenian. Subjective valency is characteristic only of the finite forms of the verb, which distinguishes most intransitive verbs in the modern Armenian language. The latter agree with the subject in the grammatical categories of gender and number.

I.2. Predicative valency of intransitive verbs in modern Armenian. Those infinite forms of intransitive verbs that function as linking verbs possess predicative valency.

I.3. Vocative valency of intransitive verbs in modern Armenian. The vocative valency is attributed to the finite forms of the second person, both singular and plural, of

intransitive verbs, which can only combine with, or at least include, nouns that denote a person.

Chapter II. Valency characteristic of finite and non finite forms of intransitive verbs in modern Eastern Armenian. Both finite and non finite forms of intransitive verbs exhibit objective and adverbial valency.

II.1. Objective valency of intransitive verbs in modern Armenian. The intransitive verbs with objective valency are distinguished as a) monovalent or b) bivalent.

II.1.1. Monovalent intransitive verbs with objective valency. Monovalent intransitive verbs with object valency combine with an object by means of strong government, which has two expressions:

1. Direct, when combined with the verb the object is expressed by a case form.
2. Indirect or prepositional, when the objects is combined with the verb by means of a preposition, i.e. with the help of case form (conjunct word) and a preposition.

II.1.2. Bivalent intransitive verbs with objective valency. A number of intransitive verbs require two indirect objects, which is determined by their lexical meaning and grammatical features.

II.2. Adverbial valency of intransitive verbs in modern Armenian. Some intransitive verbs exhibit obligatory adverbial valency, which is determined by the meaning of the verb. Specifically, this refers to those verbs which require combining with adverbial modifier of place by means of strong governorship. Depending on the number of implied actants, these verbs can be divided into two groups:

II. 2. 1. Monovalent intransitive verbs with adverbial valency. These are primarily verbs that indicate a pause and require an adverbial modifier of place.

II.2.2. Trivalent intransitive verbs with adverbial valency. These are typically verbs that denote a process and can simultaneously require adverbial modifiers of place that indicate a starting point, a transition, and an endpoint, if necessary.

In the **conclusion** the main findings of the study are presented.

ЛАЛА ОГАНЕСОВНА ГРКИЯН

ВАЛЕНТНОСТЬ НЕПЕРЕХОДНЫХ ГЛАГОЛОВ ВОСТОЧНОАРМЯНСКОГО ЯЗЫКА

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.02.01 «Армянский язык».

Защита диссертации состоится 25-ого декабря 2024 г. в 15⁰⁰, на заседании специализированного совета КВОН РА 019 по Лингвистике, действующего при Институте языка им. Г. Ачаряна НАН РА (адрес: 0015, Ереван, ул. Григора Лусаворича 15)

РЕЗЮМЕ

Актуальность темы. В современном армянском языке глагол отличается от других частей речи возможностями сочетаемости и разнообразием валентных моделей и субмоделей. Актуальность данной диссертации обусловлена тем, что возможности сочетаемости непереходных глаголов в современном армянском языке недостаточно изучены.

Цель и задачи диссертации. Основная цель исследования – научно оценить сочетаемость непереходных глаголов современного армянского языка.

Для достижения указанной цели мы поставили следующие первоочередные задачи:

- а) исследовать выражения субъектной, предикативной и вокативной валентности, характерные только для личных форм непереходных глаголов,
- б) исследовать выражения объектной и адвербальной валентности, характерные как для личных, так и безличных форм непереходных глаголов,
- в) изучить возможности сочетания непереходных глаголов с существительными разных классов,
- г) классифицировать одновалентные и многовалентные непереходные глаголы с точки зрения их объектной и адвербальной валентности,
- д) сделать выводы, вытекающие из содержания диссертации.

Научная новизна исследования. Непереходные глаголы в современном армянском языке до сих пор не подвергались отдельному изучению. Данная диссертация является первой попыткой всестороннего анализа этих глаголов, который проводился в основном опираясь на положения Г. Джахукаяна о валентности. Для того чтобы описание возможностей сочетаемости непереходных глаголов в современном армянском языке было более полным, в ходе исследования учитывались не только их грамматические, но и семантические особенности.

Теоретическая значимость исследования.

Полученные результаты могут представлять интерес для специалистов в области синтаксиса, в частности лингвистов, занимающихся вопросами валентности, а также студентов филологических факультетов, способствуя разъяснению различных вопросов, касающихся валентности непереходных глаголов.

Практическая значимость исследования. Полученные теоретические и практические результаты могут быть использованы в учебном процессе, при составлении учебников, учебных и методических пособий. Они также будут интересны составителям словаря глагольной валентности.

Структура и содержание диссертации. Диссертация состоит из введения, двух глав с соответствующими подглавами, заключения, списков использованной литературы, языковых источников и их аннотаций. Объем диссертации составляет 149 страницы.

Во введении представлена история вопроса и приведены мнения армянских и зарубежных лингвистов о валентности.

Глава I. Валентность характерная только для личных форм непереходных глаголов современного восточноармянского языка.

I. 1. Субъектная валентность непереходных глаголов в современном армянском языке. Субъектная валентность характерна только для личных форм глагола, чем и выделяется большинство непереходных глаголов современного

армянского языка. Последние согласуются с подлежащим в грамматических категориях рода и числа.

1. 2. Предикативная валентность непереходных глаголов в современном армянском языке. Предикативной валентностью обладают личные формы тех непереходных глаголов, которые выступают в роли глагола–связки.

1. 3. Вокативная валентность непереходных глаголов в современном армянском языке. Вокативной валентностью наделены личные формы единственного и множественного числа 2-го лица непереходных глаголов, которые могут сочетаться только или в том числе с существительными, обозначающими лицо.

Глава II. Валентность, характерная для личных и безличных форм непереходных глаголов в современном восточноармянском языке. Объектной и адвербиальной валентностью обладают как личные, так и безличные формы непереходных глаголов.

II.1. Объектная валентность непереходных глаголов в современном армянском языке. Непереходные глаголы с объектной валентностью бывают а) одновалентные и б) двухвалентные.

II.1.1. Одновалентные непереходные глаголы с объектной валентностью. Одновалентные непереходные глаголы с объектной валентностью сочетаются с дополнением путем сильного управления, которое имеет два выражения:

1. Прямое, когда при сочетании с непереходным глаголом дополнение выражено падежной формой.

2. Опосредованное или предложное, когда дополнение сочетается с глаголом посредством предлогов, т.е. с помощью падежной формы (присоединяемое слово) и предлога.

II. 1. 2. Двухвалентные непереходные глаголы с объектной валентностью. Ряд непереходных требуют два косвенных дополнения, что обусловлено их лексическим значением и грамматическими особенностями.

II. 2. Адвербиальная валентность непереходных глаголов в современном армянском языке. Некоторые непереходные глаголы отличаются обязательной адвербиальной валентностью, что обусловлено значением глагола. Речь в частности идет о глаголах, предполагающих сочетание с обстоятельством места посредством сильного управления, которые, в зависимости от количества предполагаемых актантов, делятся на две группы:

II. 2. 1. одновалентные непереходные глаголы с адвербиальной валентностью. Это преимущественно глаголы, которые указывают на паузу и требуют обстоятельство места.

II. 2. 2. трехвалентные непереходные глаголы с адвербиальной валентностью. Это обычно глаголы, которые указывают на процесс и при необходимости могут одновременно требовать обстоятельства места, показывающие начальную точку, переход и конечную точку.

В **заключении** представлены основные результаты исследования.